«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն՝ Աշտարակ համանքի Օշականի թիվ 9 Գայանե մ/մ

Դաստիարակ՝ Զարուհի Սիմոնյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ——————————————————————————3

Գլուխ 1——————————————————————————------4

1. Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը

Գլուխ 2——————————————————————————-16

1. Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Եզրակացություն——————————————————————————21

Գրականության ցանկ——————————————————————————----22

Ներածություն

Երեխան ունի իր առանձնահատուկ տեսնելու,
Մտածելու և զգալու ունակությունները:
Չկա ավելի հիմար բան, քան փորձել
փոխարինել դրանք մեր ունակություններով:

Ժան Ժակ Ռուսո

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը: Մեր աշխատանքի բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում, քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխային ճիշտ զարգացմանը նպաստելը:

Մանկավարժական աշխատողի աշխատանքն է նախադպրոցական երեխաների ֆիզիկական, մտավոր,բարոյական ու գեղագիտական դաստիարակությունը՝ նրանց տարիքային և անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին համապատասխան: Մանկապարտեզում մանկավարժական աշխատանքի կազմակերպիչն ու ղեկավարը դաստիարակն է: Նա պատասխանատու է մանկապարտեզի ծրագրի պահանջների կատարման համար: Նա պետք է տիրապետի բարոյական այն հատկություններին, կուլտուրական վարքի այն ունակություններին, որոնք կարող են օրինակ ծառայել երեխաների համար: Դաստիարակը մշտապես պետք է բարձրացնի իր քաղաքական և մանկավարժական պատրաստականությունը, կատարելագործի մասնագիտական վարպետությունը և ակտիվ մասնակցություն ունենա հասարակական կյանքին:

Դաստիարակչական կրթական աշխատխատանքի ընթացքում դաստիարակը հետևողականորեն իրականցնում է այն խնդիրնեն, որոնք նախատեսվածխ են նախադպրոցական երեխայի ֆիզիկական, մտավոր, բարոյական ու գեղագիտական զարգացման համար:

Նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական և ընտանեկան դաստիարակությունն օրգանապես կապված է միմյանց հետ: Ընտանիքի և մանկապարտերզի առջև ծառացած են միասնական խնդիրները:

Մանկապարտեզը կոչված է լինելու երեխաների դաստիարակության օրինակ: Նախադպրոցական ամեն մի հիմնարկում երեխայի անձնավորության դաստիարակումը պետք է զուգակցվի դաստիարակի և ընտանեկան փոխհարաբերությունների ձևավորման հետ: Մանկապարտեզի աշխատողները պարտավոր են սիստեմատիկաբար և ակտիվորեն տարածել մանկավարժական գիտելիքները, օգնել ընտանիքին՝ երեխաներին ճիշտ դաստիարակելու գործում, պրոպագանդել ընտանեկան դաստիարակության փորձը, սահմանել հասարակական և ընտանեկան դաստիարակության միասնական պահանջները:

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանիքը և ՆՈՒՀ-ը երեխաների համար կարևորագույն սոցիալական միջավայրերն են: ՆՈՒՀ-ի և ընտանիքի համագործակցությունը դիտարկվում է ուսուցման և դաստիարակության պահանջների միասնության համատեքստում: Այն ներառում է փոխօգնություն, փոխադարձ հարգանք և փոխվստահություն: ՆՈՒՀ-ընտանիք համագործակցությունը համարվում է արդյունավետ, երբ առկա է նպատակների միասնություն և գործողությունների փոխլրացում: Կողմերն ընդունում են միմյանց այնպիսին, ինչպիսին կան՝ առանց քննադատության ու մերժման:

Այսօր ձևավորվում են կրթության նոր նպատակներ ու արժեքներ, և արագ վերափոխվող իրականության մեջ, սաների զարգացման և դաստիարակության գործում ծնողներն աջակցման կարիք ունեն: Այդ աջակցությունը անվերապահորեն պետք է

հաշվի առնի արագ փոփոխվող ժամանակակից աշխարհի, ընտանիքի ենթամշակույթի յուրահատկություններն ու պահանջները և ուղղված լինի սաների դաստիարակությանը: Սանն ընդօրինակում է շրջապատի վարքը, և ընտանիքի անդամներն ու հարազատներն ունեն լայն հնարավորություններ սանի անձնային որակների ձևավորման գործում:

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործացության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության: Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղություններ.

- Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- Ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:
- Ծնողական համաժողովներ. դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:

- Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:
- Գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:
- Այցելություններ ընտանիք.
- Բաց դռների օրեր.
- Հարց ու պատասխանի ցերեկույթներ.
- Գաղափարների տոնավաճառ.
- Վստահության հեռախոս.
- Բարի գործերի օրեր.
- Կլոր սեղան.
- Զրույցներ՝ անհատական և խմբային.
- Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային.
- Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.
- Փոռատոներ և տոնակատարություններ.
- Սպորտային միջոցառումներ.
- Ցերեկույթներ:
- Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը:

ԲԱՑ ԴՌՆԵՐԻ ՕՐԵՐ

Ծնողների հետ համագործակցության այս ձևը հնարավորություն է տալիս ծնողներին դիտարկելու՝ ինչպես են շփվում մանկավարժները և սաները ներգրավվել ռեժիմային պահերի մեջ: Այս օրերին ծնողները, ինչպես նաև սաների դաստիարակության

հետ առնչվող այլ հարազատները (տատիկներ, պապիկներ, եղբայրներ և քույրեր) հնարավորություն ունեն այցելել նախադպրոցական ուսումնական հաստատություն, շրջել տարածքով, ծանոթանալ երեխաներիի առօրյային, տեսել, թե ինչպես են նրանք շփվում հասակակիցների և մեծահասակների հետ, մասնակցել խաղերին, պարապմունքներին և այլն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ՏՀՏ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Այսօր ՏՀՏ հաղորդակցումը դարձել է ժամանակակից կրթական և, առհասարակ, կյանքի կազմակերպման անբաժանելի մասը: Այն հաղորդակցության և տարբեր տեղեկություններ ստանալու միջոց է և հարմարավետություն է ապահովում: Մանկավարժների և ծնողների միջև հեռավար համագործակցության հիմնական միջոցներն են.

- կրթական հաստատությունների կայքէջերը,
- ծնողական հաղորդակցման էջերը/ չաթեր/,
- մանկավարժների անձնական էջերը և բլոգերը,
- էլեկտրոնային փոստով նամակագրությունները ,
- տարբեր ֆորումները,
- տեսակոնֆերանսները,
- սոցիալական ցանցերը,
- համացանցի միջոցով կազմակերպվող տարբեր դասընթացները, թրեյնինգները, վեբինարները և այլն:

Կապի հեռավար միջոցները կատարում են տեղեկատվական, ներկայացուցչական, խորհրդատվական և կրթական գործառույթներ: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում առցանց հաղորդակցությունը տալիս է հետադարձ կապի, տեղեկատվության արագ փոխանցման, տարբեր թեմաների քննարկման հնարավորություն: Այս միջոցներով կարելի է տրամադրել տարբեր միջոցառումների տեսահոլովակներ, ռեժիմային պահերի, պարապմունքների, ցուցահանդեսների, նախագծերի տեսագրություններ և կազմակերպել ուղիղ միացումներ: Մանկավարժների կողմից հնարավոր է կազմակերպել «վիրտուալ շրջայց» հաստատությունում, որի

շնորհիվ ծնողները կարող են հեռավար այցելել ցանկացած խումբ: Սա տալիս է նախադպրոցական հաստատությանը աշխատել թափանցիկ հնարավորություն ծնողներին ծանոթացնելու նրա ավանդույթներին, կանոններին, կրթական գործընթացքի կազմակերպման առանձնահատկություններին և այլն: Ընտանիք-ՆՈՒՀ համագործակցությունը կարող է իրականացվել նաև ներգրավելով ծնողներին տեսանյութերի, տեսահոլովակների, ֆոտոկոլաժների ստեղծման մեջ: Արդիական են առցանց հանդիպումները տարբեր մասնագետների(լոգոպեդ, հոգեբան, բժիշկ...) հետ :

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԽՄԲԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհատական խորհրդատվությունը տեղի է ունենում ընտանիք-ՆՈՒՀ սկզբնական հանդիպման ժամանակ կամ երբ առկա է բարդ իրավիճակ և չի կարող հարցը քննարկվել խմբային հանդիպումների ժամանակ, երբ ծնողների անհատական, անձնային հատկանիշները նպաստավոր չեն խմբային աշխատանքի համար:

Խմբային խորհրդատվությանը տեղի է ունենում, երբ ծնողներն ունեն ընդհանուր դժվարություններ : Այս պարագայում ծնողներին առաջարկվում է խմբերի ստեղծում հոգեբանամանկավարժական խնդիրները լուծելու համար: Նպատակը՝ ծնող-երեխա հարաբերությունների բարելավումն է, փորձառության ընդլայնումը և կողմնորոշումը տարբեր իրավիճակներում:

Աշխատանքը կարող է կատարվել հետևյալ ձևերով.

-Խորհրդատվություն կոնկրետ խնդիրների լուծման շուրջ (քննարկում):

- ծնողների ուսուցում, թրեյնինգներ

-տարածված իրավիճակների քննարկում.

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Ծնողական հանդիպումների անցկացման ինտերակտիվ ձևերից մեկը կլոր սեղանն է: Այս ձևի առանձնահատկությունն այն է, որ մասնակիցները կարծիքներ են փոխանակում միմյանց հետ բոլորի համար լիարժեք հավասարության սկզբունքով: Հանդիպման այս

ձևը թույլ է տալիս քննարկել ցանկացած հարց, իմանալ բոլոր մասնակիցների կարծիքները: Որպեսզի արդարացվի այս ձևի անցկացումը, մասնակիցները նստում են կլոր սեղանի շուրջ: Սա նպաստում է գործընկերային հարաբերությունների և ակտիվ երկխոսության սկզբունքի իրականացմանը: Կլոր սեղանի նպատակն է փորձի փոխանակումը, ընդհանուր կարծիքի ձևավորումը, երկխոսության պայմանների ստեղծումը, համախմբվածությունը, դրական մթնոլորտի ստեղծումը:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նախագծային մեթոդն օգնում է դրական փոխհարաբերություններ կառուցել ծնողների հետ, փոխում է դիրքորոշումները ծնող-երեխա-ՆՈՒՀ սուբյեկտների միջև: Դառնալով իրենց երեխաների կրթական գործընթացի մասնակիցներ՝ ծնողներն ավելի մեծ նշանակություն են տալիս իրենց երեխաների ձեռքբերումներին և հպարտանում դրանով, զարգացնում են երեխաների ներգրավվածությունը իմացական գործընթացներում, տանը միասնական աշխատանքների շնորհիվ ամրապնդվում են երեխա- ծնող համատեղ աշխատանք կատարելու կարողությունը: Ծնողների մասնակցությունը գործընթացին երեխային պատճառում է հաճույք, նպաստում հաջողությանն ու ինքնավստահությանը. ընդլայնում է երեխայի սոցիալական փորձը և ապահովում դրական օրինակներ. երեխաները սկսում են իրենց ծնողներին վերաբերել որպես գիտելիքի և փորձի աղբյուր:

ԾՆՈՂԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Կարևոր է մանկապարտեզում ունենալ ներգրավված ծնողական համայնք, որն ակտիվ կմասնակցի մանկապարտեզի կյանքին: Ծնողները կարող են ներգրավված լինել ստեղծագործական աշխատանքներում. նյութերի, դիդակտիկ պարագաների ստեղծմամբ, պարապմունքներին ներկա գտնվելով և դաստիարակին աջակցելով, ըստ մասնագիտության վարպետության դասեր անցկացնելով, տարբեր մասնագիտական թեմաներով երեխաների հետ զրուցելով, ծնողական թատրոն ներկայացնելով, դաստիարակների հետ համատեղ դերային հագուստների ստեղծելով, տոների և միջոցառումների սցենարների կազմումով և այլն: Ծնողների ներգրավվածության գործունեության վառ օրինակ կարող է ծառայել նախագծային մեթոդի ծնողների հետ

համագործակցության բաժինը, որը զգալիորեն ջերմացնում է ծնող-մանկապարտեզ և ծնող-երեխա փոխհարաբերությունները:

Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց:

Սեպտեմբերին բոլոր խմբերում անցկացվում են ծնողների հետ հարցումներ՝ ելնելով նրանց խնդիրներից և հետաքրքրություններից: Ըստ այդմ էլ պլանավորվում են <<Բաց դռների օր>>, <<Ընտանեկան թերթի թողարկում>>, <<Ընտանեկան սպորտային միջոցառումներ>>, <<Հայրիկը, մայրիկը և ես>> ու նմանատիպ այլ միջոցառումներ: Եվ այսպես՝ մայրերը, նաև հայրերը /ինչը հատկապես խիստ ցանկալի է/, ամենագործուն մասնակցություն են բերում նախադպրոցական հաստատությունների աշխատանքներին: Իսկ դա նպաստում է երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը: Ընտանեկան պատի թերթերում կարող են ստորագրել՝ <<Ես պաշտպանում եմ առողջությունս>>, <<Նոր տարին մոտենում է>>, <<Հայրենիքի պաշտպանները>> և այլ խորարգրերով հոդվածներ:

Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին: Տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով: Հատուկ թղթապանակներով ներկայացվում են հակիրճ տեղեկատվական խորհրդատվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից: Կան այլ թղթապանակներ, որոնցում դաստիարակները տեղադրում են ֆոտոնյութեր: Դրանց միջոցով լուսաբանվում է երեխաների մասնակցությունը մանկապարտեզի միջոցառումներին: Հատուկ ուշադրության են արժանի «Խորհուրդ են տալիս ծնողները» ընդհանուր խորագրով նյութերը /այստեղ հայրիկները և մայրիկները գաղտնիքիներ են փոխանակում/: Ներառված են նաև «Նոր բուժման ձև գրիպից», «Աղցանների բաղադրատոմսեր», «Լավագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ» և այլ օգտակար խորհուրդներ:

Ժողովների անցկացման ուղենիշներ

- Ճանաչելով ընտանիքներին՝ դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին: Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել գոհունակությունից մինչև թերահավատություն: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝ յուրաքանչյուր իրադրությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:
- ժողովների մասի հայտարարությունից և ընդհանուր տեղեկատվությունից բացի՝ յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդե՛ք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան: Ժամանակ հատկացրե՛ք ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը:
- Ստեղծե՛ք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրություն առաջարկելով: Ծնողների հետ քննարկե՛ք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրե՛ք, թե ինչպես կարելի է հասնել դրանց: Նշեք՛ անհրաժեշտ ռազմավարություններն ու պլանները:

Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել՝

- օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի <<տարածքն>> է,
- հաղորդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,
- շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,
- ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:

Ծնողների գնալուց անմիջապես հետո՝

- անհրաժեշտ է գրի առնել ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը,
- եթե մանկավարժից պատասխան է ակնկալվում, ապա հարկավոր է պատասխանել՝ առանց հապաղելու, — անպայման պետք է ապահովել հետադարձ կապը/հանձնարարականներ, այցելություն, երկտող ծնողներին…/:

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:

Տնային այցելությունների ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: Դրանք իրից նշանակալիորեն տարբերվում են ըստ այն հանգամանքի, թե այցելության նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե՞ ընտանիքը: Տնային այցելություն կատարողի և ծնողի միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն համագործակցային սկզբունքով:

Կարելի է տնային այցելություններն այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը: Այստեղ նույնպես

կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցում, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:

Տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միևնույն ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

Ոչ պաշտոնական գրառումներ

Ոչ պաշտոնական գրառումներ մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից որոշակի հմտությունների ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին: Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն ձևով աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Անհատական գրառումների գրքույկներ

Անհատական գրառումների գրքույկներ Այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվությունը: Ընտանիքները կարող են մանկավարժներին նախազգուշացնել հատուկ իրադարձությունների, ինչպես, օրինակ, ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների և այցելությունների մասին:

Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթն օգտակար է՝ ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ամենօրյա դասացուցակը, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձը:

Առաջարկությունների տուփ

Առաջարկությունների տուփ Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը:

Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործեն նաև «Վստահության հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ»: Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում (ընդ որում, նրանք աշխատում են որոշակի օրերի և ժամերի ընթացքում, ասենք՝ ամեն ամսվա առաջին շաբաթվա օրերից մեկը) նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում: Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ «Ամենահամերաշխ ընտանիքը»: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները: Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք կամ ընտանիք-դպրոց արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. Հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն
2. Ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ կապը հիմվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է

այն: Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն: Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալն փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել: Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու դաստիարակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

ԳԼՈՒԽ 2

ԴՐՈՒՅԹՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործե՛ք բազմատեսակ ձևեր: Ստեղծագործական և ճկուն մոտեցում ցուցաբերե՛ք:
- Ժողովները և հանդիպումները կազմակերպե՛ք ծնողների համար հարմար ժամերի:
- Թո՛ւյլ տվեք, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը:
- Պահպանե՛ք սերտ կապ:Հետևե՛ք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ զրուցի առնվազն շաբաթը մեկ անգամ:
- Փորձե՛ք ներգրավել ամբողջ ընտանիքին: Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար որոնե՛ք տարբերակներ՝ հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:
- Հենվե՛ք երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքե՛ք դրականորեն:
- Եղե՛ք համբերատար: Պահպանե՛ք գաղտնիությունը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ

ԽՈՍԵՔ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԼԵԶՎՈՎ»

- Ճաշի ընթացքում երեխայի հետ խոսե՛ք այն մասին, որ նրա բաժակը լիքն է կամ դատարկ: Առաջարկե՛ք նրան այսօրինակ հարցեր. <<Ուզում ես այս ամբողջ կտո՞ր տամ քեզ, թե՞ կեսը>>, <<Հացը եռանկյունաձև՞ կտրատենք, թե՞ քառակուսի>>:
- Երեխային թու՛յլ տվեք մասնակցել չորացած լվացքը տեսակավորելու և գուլպաները զույգ-զույգ դասավորել:
- Երգե՛ք կամ ոտանավորներ ու շուտասելուկներ արտասանե՛ք երեխայի համար. <<Մե՛կ, երկու՛, երե՛ք, ձմերուկը բերե՛ք…>>:
- Երեխային հագցնելիս մեկ առ մեկ հաշվե՛ք նրա վերնաշապիկի կամ վերարկուի կոճակները:- Երեխային թու՛յլ տվեք Ձեզ օգնել սեղան պատրաստելիս: Թող նա հաշվի այն մարդկանց քանակը, ովքեր պետք է ճաշեն: Օգնե՛ք, որ նա յուրաքանչյուրի համար դնի դանակ, պատառաքաղ, գդալ և անձեռոցիկ:

ՁԵՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԵՐԵԽԱՆ

/3-5 տարեկան/

- Հաճախակի զբոսանքի ելեք Ձեր երեխայի հետ և ճանապարհին զրուցե՛ք նկատված ամեն բանի մասին:

- Փորձե՛ք տարբեր կերպարներ ու ձևեր որոնել երկնքով սահող ամպերի մեջ:

- Խնդրե՛ք Ձեր երեխային՝ մի երևակայական կենդանի նկարել, որը գոյություն չունի աշխարհում, և բացատրեք, թե ինչպես է այդ կենդանին ապրում:
- Կազմակերպե՛ք պարզ բառախաղեր. նախ՝ խնդրե՛ք Ձեր երեխային, որ նա թվարկի շրջապատի բոլոր թռչող առարկաներն ու էակները, հետո՝ այն ամենը, ինչ կարմիր է կամ կանաչ: Մեկ էլ առաջարկե՛ք գտնել այնպիսի առարկաներ, որոնց անվանումները հանգավորվում են որոշակի բառերի հետ:
- Նստե՛ք երեխայի կողքին ու խնդրե՛ք նրան ուշադիր լսել շրջապատի ձայները, այնուհետև նկարագրեք դրանք: Երևակայությունը խթանում են հատկապես այնպիսի խաղերը, երբ երեխան զգեստափոխվում է, կերպարանափոխվում, ինչպես նաև նկարչությունն ու գունազարդումները:
    - Օգնե՛ք երեխային՝ սկսել աշխատանքը: Եթե նա ուզում է շնիկ նկարել, բայց դժվարանում է, Դուք կարող ե ասել. <<Արի պատկերացնենք շնիկին: Ո՞րն է նրա մարմնի ամենամեծ մասը: Քանի՞ ոտք ունի շնիկը>>:

- Առաջարկե՛ք տարբեր տեսակի նյութեր: Ձեզ պետք չեն շատ թանկն ու արժեքավորը: Օգտագործե՛ք այն, ինչ ունեք ձեռքի տակ՝ ամսագրեր, թերթեր, թղթի թափոն, գործվածքների կտորներ, թելեր, պարաններ, կոնֆետի, ձվի տուփեր, կոճակներ, փայլաթիթեղ, ատամի հին խոզանակներ, սպունգ, բամբակ և այլն:
- Երեխայի աշխատանքը գնահատելիս <<Լավ է, գեղեցիկ է>> ասելու փոխարեն փորձե՛ք լինել ավելի հստակ և նկարագրել այն, ինչը Ձեզ դուր է գալիս նրա կատարած աշխատանքում: Խոսե՛ք օգտագործված նյութերի, գույների գաղափարի աշխատանքի առանձնահատկությունների մասին:
- Հնարավորություն տվե՛ք երեխային պատմել իր աշխառանքի մասին և արտահայտել իր զգացմունքները: Քաջալերե՛ք նրան՝ առաջարկելով. <<Պատմի՛ր ինձ քո նկարի մասին: Ինչու՞ որոշեցիր հենց ձի նկարել>>:
- Անպայման ցուցադրե՛ք երեխայի աշխատանքը՝ այն փակցնելով պատին:

ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

/3-5 տարեկան/

Նախընտրելի են տարատարիք երեխաների բանավոր խոսքով շփումները:

- Աշխատե՛ք խոսել հստակ և բառերն արտասանե՛ք հատ-հատ՝ դրանց միջև սովորականից մի քիչ ավելի երկար դադարներ անելով: Արագախոսությունը կարող է շփոթեցնել երեխաներին: Երեխաների հետ խոսելիս նկատի առեք, որ նախադասությունների պարզեցումն օգտակար է, սակայն պետք չէ թույլ տալ թոթովախոսություն:
- Ավելի հաճախ կազմակերպե՛ք այնպիսի խաղեր, որոնք պահանջում են անգիր կրկնել առանձին հատվածներ: Դրանք խոսքի զարգացման համար հրաշալի վարժանք կարող են լինել: Աշխատե՛ք, որ այդ խաղերը լինեն հեշտ և զվարճալի: Հանգավորված ոտանավորները լավագույնս զարգացնում են երեխայի խոսքային կարողությունները:
- Նկատի առե՛ք, որ երեխաներին ժամանակ է հարկավոր բառերը մտաբերելու և ճիշտ վերարտադրելու համար: Երբ Դուք փոխարեն ասում եք պահանջվող բառը, ապա զրկում եք նրան ինքնուրույն որոնելու և ասելու հնարավորությունից: Եթե երեխան սխալ է արտասանում բառը, մի՛ շտապեք հանդիմանել, այլ պարզապես կրկնե՛ք ճիշտ տարբերակը: Ծնողներին հետևելով՝ երեպաները շատ արագ են յուրացնում պահանջվող կանոնները: -Զուգորդումներ կատարե՛ք առօրյա երևույթների ու առարկաների հետ, որոնք կօգնեն հասկանալ և հիշել նոր բառերը: Խոսելիս հարկավոր է մատնացույց անել առարկանները, որպեսզի երեխան ըմբռնի թե ինչի մասին է խոսքը:
- Հարկավոր է երեխաների համար ամեն օր կարդալ, և այդ ընթերցանությունը պետք է լինի դանդաղ, պարզ ու արտահայտիչ:
- Երեխաները սիրում են ձեռք տալ գրքերին, թերթել էջերը և զարմանալ զետեղված նկարներով: Պետք չէ նրանց արգելել կատարել այդ գործողությունը:
- Երեխաների համար ընթերցելը դարձրե՛ք ամենօրյա գործ: Այն վերածե՛ք Ձեզ և Ձեր երեխայի համար հաճելի ժամանցի:

- Խոսե՛ք նկարների մասին: Պատմությունը ներկայացնելու համար պարտադիր չէ գիրքը կարդալ:
- Ցո՛ւյց տվեք երեխային գրքի կազմը:
- Բացատրե՛ք, թե ինչի մասին է պատմությունը:
- Ձեր երեխայի ուշադրությունը հրավիրե՛ք բառերի վրա: Ընթերցելու ժամանակ Ձեր մատը շարժե՛ք բառերի վրայով:
- Կենդանություն հաղորդե՛ք պատմությանը: Արտահայտիչ ընթերցե՛ք: Նմանակե՛ք կենդանիների ձայները: Շարժումների միջոցով ներկայացրե՛ք պատմության տարբեր դրվագները և կերպարների վարքը:
- Հարցեր տվեք պատմվածքի վերաբերյալ (<<Ի՞նչ կպատահի հետո: Ինչու՞ ես այդպես կարծում: Իսկ դու ինչպե՞ս կվարվեիր>>):
- Հնարավորություն տվեռ երեխային՝ հարցեր տալու:
- Պատրաստե՛ք ձեր սեփական գրքերը: Վերցրե՛ք մի նոթատետր կամ թղթի թերթերը երկտակ ծալե՛ք, ապա երկու անցք բացե՛ք եզրից և դրանց միջով թել կամ ժապավեն անցկացրե՛ք:
- Գիրք՝ իմ մասին. Գրքի մեջ զետեղե՛ք ամենատարբեր նկարներ կամ լուսանկարներ, որոնք ներկայացնում են ձեր ընտանիքի անդամներին, ընկերներին, սիրած ընտանի կենդանիներին, երեխայի խաղալիքները, ննջարանը, սիրելի իրերը և այլն:

- Սիրելի թեմաներ. Հին ամսագրերից կամ թերթերից կտրե՛ք-հավաքե՛ք սիրելի թեմաների՝ օրինակ՝ մեքենաների, կենդանիների կամ ուտելիքների վերաբերյալ նկարներ:
- Ձևեր և գույներ. Հավաքե՛ք տարբեր ձևեր ունեցող առարկաների նկարներ և ձևերից յուրաքանչյուրին տրամադրե՛ք մեկ էջ: Նույնը արե՛ք գույների հետ:
- Պատմվածքներ. Օգնե՛ք երեխային պատմվածք հորինել և գրի առե՛ք նրա թելադրածը: Հետո նա կարող է նկարազարդել իր սեփական պատմվածքը:

Եզրակացություն

Որպես դաստիարակ և ծնող, շատ եմ կարևորում մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ-ընտանիք կապը: Ծեսերի և միջոցառումների ժամանակ ներգրավեցի նաև ծնողներին, ինչը տվեց իր դրական արդյունքները: Դրանք են՝

- Ծնողների ոգևորվածությունը
- Համախմբվածությունը
- Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ
- Ծնողների վստահության բարձրացումի մանկապարտեզի և դաստիարակության նկատմամբ
- Երեխաների լավ վարքը

Մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվել է մեր համատեղ աշխատանքը, որը երկուստեք հաճելի է:

Գրականության ցանկ

1. Ա. Ս. Մարության, Ա. Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> բուհական դասագիրք, Երևան 2008թ.
2. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2010թ.
3. Հ. Հ. Պետրոսյան «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները» 1-ին , 2-րդ մաս Երևան 2007թ.
4. Լ. Սմբատյան- Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում, Երևան 2014թ.
5. Осипова Л.Е. Работа детского сада с семьей, М.2008г.
6. Технология социально- личностного развития и воспитания дошкольников. под ред.